

ՄՇԱԿ

Տարեկան գլխավոր 10 րոպեի կէս տարվանը
և 7 ամսական 6 րոպեի.
Առանձին համարները ԱՄՆՆ ՏԵՂ 5 40Պ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցեն՝ Тифлисть, редакция «Мшак»
Сербиевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տէլեֆոն № 2—53.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տոն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տէլեֆոն № 67.

ՀԱՅԵՆՔԱԳԻՏՈՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԺԵՐՈՒՆԻ

„ՄՇԱԿ“ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ խորին վշտով յայտնում է խմբագիր-նրատարակիչ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԲԱԼԱՆԹԱՐԻ

անակնկալ մահը, որ տեղի ունեցաւ կիրակի, հոկտեմբերի 20-ին, ցե-
րեկվայ ժամը 12¹/₂-ին:
Առաջին հոգեհանգիստը կը կատարվի այսօր, երեքշաբթի, հոկտեմբ.
22-ին, երեկոյեան ժամը 7-ին հանգուցեալի ընակարանում՝ Գրիբօէզօվ-
սկայա փող. սեփ. տուն, № 5.
Թաղման օրվայ մասին կը յայտարարվի առանձին:

ՍՕՅԻՆ ԳՐԻԳՐԵԱՆ ԲԱԼԱՆԹԱՐԻ, իր գաւախներով, սրտի անհուն կակի- ծով յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին թան- կազին ամուսնու և իօր ԱԼԷՔՍԱՆԴՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԲԱԼԱՆԹԱՐԻ

անակնկալ մահը, որ տեղի ունեցաւ կիրակի, հոկտեմբերի 20-ին, ցե-
րեկվայ ժամը 12¹/₂-ին:
Առաջին հոգեհանգիստը կը կատարվի այսօր, երեքշաբթի, հոկտեմբ.
22-ին, երեկոյեան ժամը 7-ին հանգուցեալի ընակարանում՝ Գրիբօէզօվ-
սկայա փող. սեփ. տուն, № 5.
Թաղման օրվայ մասին կը յայտարարվի առանձին:

„ՄՇԱԿ“ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ սրտի կակիծով յայտնում են խմբագիր-նրատարակիչ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԲԱԼԱՆԹԱՐԻ

յանկարծամահը, որ տեղի ունեցաւ հոկտ. 20-ին, ցերեկ. ժ. 12-ին¹/₂-ին:
Առաջին հոգեհանգիստը նշանակված է այսօր, հոկտ. 22-ին, երեկ.
ժամը 7-ին, հանգուցեալի ընակարանում՝ Գրիբօէզօվսկայա փ. տ. № 5.
Թաղման օրվայ և յուզարկաւորութեան կարգի մասին կը յայտա-
րարվի առանձին:

„ՄՇԱԿ“ քաղաքի գրաշարական կազմը սրտի ան- հուն վշտով յայտնում է իր խմբագիր-նրա- տարակիչ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԲԱԼԱՆԹԱՐԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ կիրակի, հոկտեմբերի 20-ին, ցերեկ-
վայ ժամը 12¹/₂-ին:
Առաջին հոգեհանգիստը կը կատարվի այսօր, երեկոյեան ժամը 7-ին
հանգուցեալի ընակարանում՝ Գրիբօէզօվսկայա փող. սեփ. տ. № 5.

Թիֆլիսի Հայ Գիւղատնտես. և Տնայնագործ. Ընկ.
Վարչութիւնը
յայտնում է իր անփոխարինելի
ՆԱԽԱԳԱՀԻ և ԸՆԿ. ՀԻՄՆԱԴԻՐ
ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐԻ
936. յանկարծակի մահէն առիթով իր խորին ցաւը: 2—1

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՋԸ

«Մշակ» խմբագրութիւնը անհուն
վշտով, անսահման կակիծով գուժում
է հայ ժողովրդին իր խմբագրի՝ Ա.
Բալանթարի անակնկալ մահը, որ
տեղի ունեցաւ կիրակի, հոկտեմբերի
20-ին, ցերեկվայ ժամը 12¹/₂-ին,
Բալանթարի դամբարանի վրա հոգեհան-
գիստ կատարելիս, ի ներկայութեան
խումբ բազմութեան, սրտի պայ-
թիւնից:
Յիսուն օրվայ ընթացքում սա ար-
դէն երկրորդ կորուստն է, որ կրում
է «Մշակ» որբացած ընտանիքը:
Շղթած, ապշած սոսկալի հարուա-
ծի և անգարմանելի աղէտի ծանրու-
թեան ներքոյ, զեռ չապաքինած,
զեռ չը կողոզւորված առաջին կո-
րուստից, յանձին Յովհաննէս Տէր-
Մարկոսեանի, խմբագրութիւնը այս
անգամ հարուածը ստանում է ուղ-
ղակի իր սրտի մէջ, զրկվում է իր
սիրելից, իր զեկավարից, և այդ՝ այն
րօպէին, երբ զեռ պէտք էր նրան,
երբ պէտք ունէր նրան և հայ ժո-

ղովուրդը, հայ գիւղացիութիւնը,
հայ հրապարակաստութիւնը, հայ
կնտեղիքները:
Արտայայտել այս րօպէին ամբողջ
խորութիւնը մեր վշտի, ամբողջ մե-
ծութիւնը մեր կորստի՝ անկարող
ենք:

Կակիծը, մորմուռը կաշկանդել է
մեր լեզուն, բխացել է մեր զգա-
յարանները:

Մենք այս րօպէին միայն մի բան
զիտենք և զգում ենք. մեռաւ մեր
երկրորդ հայրը, Գրիգոր Արծրունու
չաջորդը, թողնելով որբ մեզ իր
գաւախներին, մեռաւ հայ ժողովրդի,
հայ ազգի անխնայ, անսիրտ մշակը,
հայ գիւղացու անզուգական պաշտ-
պանը, ուսուցիչը, զեկավարը, ան-
կեղծ բարեկամը և հոգատարը. մե-
ռաւ հայ մեծ հրապարակաւորը,
լուսնի հեղինակաւոր ծայրը:


Անփոխարինելի է մեր կորուստը.
անգարմանելի է մեր ցաւը, անփո-
խարինելի է մահաւանդ հայ գիւղա-
ցու, հայ ժողովրդի կորուստը:

որ իրաւունք ունենանք ապրելու:

Աւարտ, այլ ևս ունինք պէտք է
լսի «Մշակ» խմբագրութիւնը այդ
զուարթ, խրախուսիչ, կենարար ձայ-
նը. Աւարտ, այլ ևս ունինք պէտք է
լսի հայ գիւղացին իր ցաւերի, կա-
րեքների դարմանը, բժշկութիւնը:
Այնքանոր Բալանթարի չքանում
է մարմնով մեր ասպարէզից այն
րօպէին, երբ նա թիւրքմանայ ժողո-
վրդի ազատագրութեան համար նոր
ուղիներ էր հարթում, նրա անտե-
սական և քաղաքա-անտեսական
կեանքի ու յարաբերութիւնների ու-
սումնասիրութեամբ. Պորին հաւատ
ունենալով այդ ազատագրութեան և
հայ ժողովրդի բարոյական վերածը-
նութեան մասին, նա նորաւոր ծրա-
գիրներ էր յղանում, ծրագրերն ոչ
տեսական, վերացական, այլ էական,
գործնական, զրկած՝ հայ ժողովրդի
իսկական կեանքի ուսումնասիրու-
թիւնից և պահանջներից, որոնց նա
ամենամեծ գիտակն էր և ճանաչողը:
Մեր կորուստը ոչ միայն անփո-
խարինելի է, այլ և անգարմանելի:
Այսօր, երբ ընկնում է հայութեան
լաւագործ գաւախներից մինը, գու-
ցէ առաջինը լաւագործ գաւախներից,
«Մշակ» որբացած խմբագրութիւնը
և աշխատակիցները միայն մի իղձ
կարող են ունենալ—այն, որ ինչպէս
Գրիգոր Արծրունու մահից յետոյ նրա
հօգին սաւառնեց «Մշակ» վրա ամ-
բողջ 20 տարի, այսուհետեւ Գրիգոր
Արծրունու հօգու հետ սաւառնէ
Այնքանոր Բալանթարի հօգին, Բա-
լանթարի, որ ամբողջ 20 տարի վա-
րեց Արծրունու գործը և կատարեց
քաղաքակրթական մի աշխատի վիթ-
խարի առաքելութիւն, միացնելով տե-
սական ժողովրդագիտութիւնը գործ-
նականի հետ, որի նմանը հայ պատ-
մութիւնը հազիւ է արձանագրել իր
էջերի մէջ:

Խոնարհվելով մեծ ուսուցչի,
պաշտելի ընկերի և վեհ իդէալիստի
սփիններին առաջ, խոնարհվելով
բնութեան օրէնքի առաջ՝ Dura lex
sed lex, ես այս րօպէին զգում եմ
միայն այն, որ դժուար թէ մենք կա-
րողանանք վերականգնել այն սոս-
կալի հարուածից իտոյ, որ մենք
ստացանք կորցնելով Այնքանոր
Բալանթարի պէս մի վիթխարի ոյժ,
որի բացակայութիւնը այսուհետեւ
անհունապէս ազդելու է հայ ժողո-
վրդի, հայ գիւղացու ամբողջ մտա-
ւոր, հոգեւոր-բարոյական և անտեսա-
կան կեանքի վրա:

Հ. Առաքելեան



ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐԻ
(1855 սեպտ. 20—1913 հոկտ. 20)

ՏԱՊԱԼՎՅՑ ՄԻՒՆԸ

Որբացաւ «Մշակ»:
Մեռաւ Այնքանոր Բալանթարը:
Մեռաւ ոչ միայն «Մշակ» զե-
կավարը, խմբագիրը, այլ և մեռաւ
հայ ժողովրդի անկեղծ, սրտացաւ
բարեկամը, հայ կնտեղիքներից
լուսաւոր և կարկառուն դէմքը, հայ
գիւղացու իսկական ուսուցիչը,
պաշտպանը և հովանաւորը:
«Մշակ» հետ միասին որբացաւ
հայ գիւղացիութիւնը, ուրեմն հայ
աշխատաւոր ժողովրդի մեծամաս-
նութիւնը:
Եւ այսօր սուգի օր է ոչ միայն
«Մշակ» ընթերցողներին, ոչ միայն
հայ կնտեղիքներից, այլ և մեծ սու-
գի օր է հայ գիւղացիութեան հա-
մար, որովհետեւ նա զրկվեց իր մեծ-
տօրից, իր մեծ ուսուցչից, իր
կեանքի զեկավարից:
Նա ընկաւ իբրեւ արի և քայլ զին-
ւոր պատերազմի դաշտի վրա. նա ըն-
կաւ ամբողջ 40 տարվայ անընդհատ,
անխնայ, բեղմնաւոր գործունեու-
թիւնից յետոյ և ընկաւ այն րօ-
պէին, երբ դեռ իր գործութեամբ,
եռանդով, յոյժով, հաւատով զգելի
իր ստեղծագործական աշխատու-
թիւնը, զեպի իր քաղաքակրթական
միասնին. ընկաւ այն րօպէին, երբ

բերանը բանում էր դրուստների
մի պսակ հիւսելու «Մշակ» նշա-
նաւոր աշխատակիցներից մէկի՝ Բալ-
անթարի գործունեութեան ծաղկանքից
և հիւսելու նրա շիրմի վրա:
Բալանթարն տարիների անընդհատ,
անխնայ, եռանդուն և բեղմնաւոր
աշխատութիւնը, գործունեութիւնը
չը կարողացան ընկճել նրա հոգին,
բայց ընկճեցին նրա մարմինը, նրա
նիւթերէնը. եւ անգուժ բազմ
կարճեց, կարճեց նրա կեանքի թիւը,
երբ նա աւանդաւ զեռ մի 10 տա-
րի կարող էր և պէտք է գործէր
յօգուտ ժողովրդի, յօգուտ գիւղա-
ցիութեան, յօգուտ մեր երկրի արն-
տեսական և հոգեւոր, բարոյական
բարգաւաճման:

Եւ չը գիտեմ ո՞վ պէտք է փոխա-
րինի Այնքանոր Բալանթարին. ես
նրա ներկայութեամբ և աշակցու-
թեամբ ինձ առիւծ էի զգում, ա-
նընկճելի, անխոցելի. այսօր ինձ
վիրաւորված, խոցուած և ընկճ-
ված եմ զգում, որովհետեւ այլ ևս
չը կայ նա, ով ամենամիտաւորան,
ամենալուսաւորական րօպէներին
իր գուարթի, զգոն, պայծառ մաքով
է բարձրով հոգի, խրախուսանք,
եռանդ էր ներշնչում մեզ ամենքիս,
ասելով՝ Եկե՛ք, աշխատե՛ք ինչպէս
անընդհատ պայքար է. աշխատե՛ք,

ԱԼ. ԲԱԼԱՆԹԱՐԻ

«Մեր երթալը տանք կատարելա ըստ,
որով վարեն և յարմարէր...»

Խորհրդացի, Ողբ

Անփոխարինելի է հայ ժողովրդի կորուս-
տը. մեր երկնակամարէն ընդ միջոյ հեռա-
ցավ նա, որի շինարար ձեռքը, ստեղծագոր-
ծող ոգին շօշափում էին հայութեան բոլոր
խավերը, նրա կեանքի բոլոր երեւոյթները:
Մամուլ և գրականութիւն, զեկավար և
ժողովրդական անտեսութիւն, զպրօց և
թատրօն, եկեղեցի և ազգագրութիւն, քա-
ղաքական հարցեր և գիւղատնտեսութիւն...
ամեն տեղ կըր նա, ամեն տեղ զգացվում
էր նրա հնաւուս մաքի բարբառ՝ ազգե-
ցութիւնը:

Մի անզուգական գործիչ էր նա, որին
հավատարմութեամբ քննադատում և հավատար-
մութեամբ պաշտում էին բոլորը, առանց կուսակ-
ցական խտրութեան. նա պատկանում էր
ներշնչում ամենին իր կարեկալ ընդվորու-
թեամբ և գործնական իրաւունքով. նրա մէջ
տեղի էր տալիս բանականութեան, և ժողով-
ների մէջ, երբ միջնորդուէր էլեկտրականա-
ւորում էր, երբ կուսակցութիւն էր փոթորի-
ւորում էր ամբողջ հայութեան էր նրա հանգարտ,
հավատարմութեամբ ձայնը, լուրում էր նրա
լայն տեսակէտները պարունակող խօսքը. ոչ
իրեւ բուժիչ բաւարար էր ազգում դրուած
հոգիների վրա. և անս ցլովում էր փոթո-
րելի և արեւում էր հոգիների խաղաղու-
թիւն. նրա ամեն արդէն համարել էր մեզ
մութեան, քաղաքացիական պարկեշտու-
թեան. նա կարող էր ունենալ հակապարզ-
ներ, բայց չունէր թշնամիներ, արհամար-
հողներ. նա սրա հետ միասին՝ նա անյող-

